

## ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆԼԻՏԱԿԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Արշակ Չոպանյանը (1872–1954) հայ գրականագիտական մտքի արտասովոր զբաղմունքներից է: Նա թողել է գիտահետազոտական վիթխարի ժառանգություն: Ա. Չոպանյանն ապրեց ու գործեց մի ժամանակահատվածում, որը լի էր ողբերգություններով՝ 1896–1897 թթ. համիդյան ջարդերը և, իհարկե, ամենաօրհասականը՝ 1915 թ. ազգակործան եղեռնը, որը կազմակերպել էին երիտթուրքերը: Այս հոգևածր նորովի անդրադարձ է Ա. Չոպանյանի՝ հայ միջնադարյան գրականությանը նվիրված աշխատություններին, որոնք այսօր էլ պահպանում են իրենց արդիական նշանակությունը: Ինչպես նաև հարգանքի տուրք՝ նվիրված մի արտասովոր մտավորականի, որը հայ գրականության միջազգայնացման բնագավառում բացեց բոլորովին նոր էջ՝ իր կատարածով ազդարարելով նվիրյալ լինելու երևույթի սրբազան իմաստը:

Ա. Չոպանյանից մեզ հասել են հազարավոր նամակներ, որոնք ներկայացնում են ոչ միայն հայ գրողի, մտավորականի, գրականության պատմաբանի, թարգմանչի հետաքրքրությունների վիթխարի ծավալը, այլև ինչ-որ իմաստով բնութագրում են վաթսուներորդի ժամանակահատվածի հայ մտավոր կյանքի ընթացքը: Այդ նամակների հարուստ ծաղկաքաղը կազմել և ծանոթագրել է գրականագետ Գոհար Ազնավուրյանը՝ որպես «Գրական ժառանգություն» մատենաշարի 13-րդ հատոր, որը հրատարակվել է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի կողմից<sup>1</sup>:

1893 թ. Ա. Չոպանյանը տեղափոխվում է Փարիզ. այդ քաղաքի հոգևոր ու մշակութային կյանքի առաջին տպավորությունները նրան ուղեկցում են մինչև կյանքի վերջը: Ինչպես հստակորեն երևում է Ա. Չոպանյանի նամակներից, նա մշտապես իր տեսադաշտում պահել է ողջ հայ գրականությունը՝ հինը, միջնադարը, նորը և իրեն ժամանակակիցը: Հայ գրականության զարգացումը նրա մտապատկերում չունի ընդհատում. այն մի կուռ համակարգ է, և ինքն այդ համակարգի գնահատողն է ու բարձրացնողը: 1908 թ. Ա. Չոպանյանը կաթողիկոսական ընտրությունների առիթով եղել է Անդրկովկասում՝ էջմիածնում, Երևանում, Թիֆլիսում, Բաքվում: Դրանից դեռևս մեկ տարի առաջ, երբ միայն պատրաստվում էր այդ ուղևորությանը, նրան ոգևորում էր էջմիածնի մատենադարանի ձեռագիր մատյաններում «փնտրտուքներ» կատարելու գայթակղիչ հեռանկարը<sup>2</sup>:

Ա. Չոպանյանն իր գրական, հասարակական գործունեության ընթացքում շփվում էր ֆրանսիացի, մասնավորապես Փարիզի մտավորականութ-

<sup>1</sup> Ա. Չոպանյան. Նամակներ. Երևան, 1980, 500 էջ:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ. 91:

յան նշանավոր դեմքերի հետ ջանալով նրանց մեջ սեր սերմանել դեպի հայ ժողովուրդը՝ որպես հին քաղաքակրթությունը ներկայացնող ազգի: 1916 թ. մարտի 16-ին Վալերի Բրյուսովին գրած նամակում Չոպանյանն իր «սիրելի և մեծանուն ղրջեղորոր» տեղյակ է պահում ապրիլի 9-ին Սորբոնի համալսարանում կազմակերպված հայ ժողովրդին նվիրված տոնական ցերեկույթի մասին, նշում է, որ այդ ցերեկույթը նախագահելու է Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Պոլ Տեշանելը, ելույթ են ունենալու հանրային կրթության նախագահ պարոն Պենյվեն, նշանավոր գրողներ Անատոլ ֆրանսը և Պոլ Ադամը: Իսկ «Կոմեդի Ֆրանսեզի» դերասաններն արտասանելու են հայ բանաստեղծների գործերի ֆրանսերեն թարգմանությունները, պետք է հնչի հայկական երաժշտություն: Ա. Չոպանյանի համար շատ կարևոր էր օտարներին հայկական մշակույթն ու գրականությունը ներկայացնելը, սակայն նույնքան հրատապ էր համարում այն, որ հայերը ճշտորեն ճանաչեն իրենց անցյալը, և այդ ազնիվ, ազգանվեր մտահոգությամբ էլ իր տպագրած գրքերը շարունակական ձևով ուղարկում էր Հայաստան: Այդօրինակ մտահոգության ենք հանդիպում 1926 թ. Ալեքսանդր Շիրվանզադեին ուղղված նամակում. «Ըսե ինձի, ինդերեմ, Երևանի Ազգային Մատենադարանին մեջ «Roseaie»-ի երկու հատորներս կա՞ն, թե՞ ոչ. մեկե ավելի անգամ ղրկած եմ, ինչպես և մյուս գործերս»<sup>3</sup>:

Չափազանց սրտաշարժ է 1950 թ. դեկտեմբերին ամերիկահայությունն ուղղված Ա. Չոպանյանի նամակը: Այդ նամակի շարժառիթը եղել է Միացյալ Նահանգների հայ գաղութի կողմից իր գրական գործունեության 60-ամյա հոբելյանի նշումը: Հոբելյարն ի վիճակի չի եղել մեկնելու հանդիսությունը և իր համառոտ խոսքը ձայնագրել է՝ ձայնասփյուռով հաղորդելու համար: Նամակի մեջ խտացված ձևով տրված է Ա. Չոպանյան հայրենանվեր գործչի ինքնաբերական թափանցիկ խոսքը: Նա ամեն ինչ արել է հանուն ազգային արժեքներն աշխարհին ներկայացնելու, և, հիրավի, այդ տոնն ազգային մշակույթի ճանաչման տոնն է. «Ինչ որ գուք այս իրիկուն պիտի տոնեք, իմ գրական գործունեությանս հոբելյանը չէ միայն, այլ մեր ազգային մշակույթն իսկ է, մեր ջգուտ, նուրբ ու ներդաշնակ լեզուն, մեր ճոխ ու կենսախայտ գրականությունը, մեր ինքնուրույն գեղարվեստը իր բոլոր ճյուղերով:

Հայ մշակույթը մարդկային քաղաքակրթության ամենեն իսկատիպ ու թանկագին արտահայտություններեն մեկն է, ան է, որ մեր հայրենիքը հարվածող ահավոր ազետներեն մեջ մեր ազգը կենդանի պահած է, զայն կարող դարձուցած է իր քանդված տունը վերականգնելու:

Ես ուրիշ բան չեմ ըրած, բայց եթե քանի մը ծաղիկ ավելցնել մեր գրականության բազմադարյան մշտաթարմ բուրաստանին ու նաև բոլոր կրցածս ընել մարդկային ընտրանիին ճանչցնելու և սիրցնելու համար մեր մշակույթին ամենեն արժեքավոր գանձերեն գեթ մի քանին»<sup>4</sup>:

Ա. Չոպանյանի բոլոր ծրագրերը հենվել են գործնական ստեղծագործությունների վրա: Ամեն ինչ իրատեսորեն չափված-ձևված է եղել նրա

<sup>3</sup> Ա. Չոպանյան. Նամականի, էջ 164:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 354-355:

կողմից, ամեն մի նոր ձեռնարկ եղել է մեծ գործունեության ծրագրի մի կարևոր օղակը: Իսկ ծրագիրը մեկն էր համայն աշխարհին և համայն հայությանը ներկայացնել հայ գրական արժեքների համամարդկային բնույթը: Եթե որոշ ծրագրեր չեն իրականացել, ապա գրա պատճառը եղել է մեկը՝ նյութական միջոցների պակասը:

Եթե Ա. Չոպանյանը տպագրեր միայն "La Roseaie d'Arménie" («Հայաստանի վարդաստան») մեծարժեք ժողովածուի երեք հատորները, արգեն մեծ ծառայություն մատուցած կլիներ հայ միջնադարյան քնարերգությունը միջազգային ճանաչման արժանացնելու գործում: Այս ժողովածուի առաջին հատորի նախաբանում նա ներկայացնում է հատորներն ստեղծելու իր նպատակը: Նա խոստովանում է, որ գրքի որոշ նյութեր տպագրել է "Les Trouvères Arméniens" («Հայ գուսաններ») հատորում, որը ներկայացնում է հայ և՛ ժողովրդական երգը, և՛ հոգեկոը: Հատուկ ձևով «Հայաստանի վարդաստանը» («Վարդենիկ Հայաստանի») բանասերը նկարագրողում է հայ միջնադարյան մանրանկարներով. դա պետք է նպաստեր միջնադարյան գեղարվեստական մտածողության առավել ճիշտ ընկալմանը, հետևաբար՝ մեր հենրի դեղագիտական ընկալումների ըմբռնմանը: 1913-1914 թթ. ընթացքում "La Roseaie d'Arménie" ժողովածուի առաջին հատորն արդեն տպարանում էր, երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը: Եվ գործը չորս տարի «քնեց»՝ առանց տպագրվելու: Պատերազմն առավել վատթարացրեց հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական վիճակը, իսկ Արևմտյան Հայաստանը 1915-ին եղեռնի զոհը դարձավ: Ահա այդ ծանր, մղձավանջային իրադարձություններին ի պատասխան, իսկական լույսի ու խաղաղության շող դարձավ "La Roseaie d'Arménie" ժողովածուի հատորը:

Հայ միջնադարյան քնարերգության գոհարներն Ա. Չոպանյանն անվանել է «Հայաստանի վարդաստան»: Վարդը քրիստոնեական մտածողության մեջ գեղեցկագույն ծաղիկն է, այն նույնիսկ համարվում է Հիսուս Քրիստոսի խորհրդանիշներից, ինչպես արևը, ցորենը, հացը: Կոստանգին Երզնկացին իր այլաբանական տաղերից մեկի խորագրում նշում է՝ «Բան վարդի օրինակաւ զՔրիստոս պատմէ»: Ընդհանրապես իր բաղմամբիվ հետազոտություններում Ա. Չոպանյանը հաճախ է հայ քնարերգությունը համեմատում ծաղկաստանի հետ՝ ծաղիկը գիտելով որպես գեղագիտական կատարելության խորհրդանիշ: Ինչպես երևում է առաջաբանից, հեղինակը հետագայում այն որոշ փոփոխության է ենթարկել իր գայրույթի խոսքն ուղղելով կատարված եղեռնագործության հեղինակներին (մարգկությունը լսելի լինելու ցանկությամբ)՝ իր այգ գործով կամենալով ևս մեկ անգամ ցույց տալ բանաստեղծական արվեստի այն ուժը, որն ուներ մի ժողովուրդ, որին նրանք կոտորում էին: Հայաստանը գարեր ի վեր եղել է աղմական գործողությունների թատերարեն: Սակայն այս անգամ թուրքերը մեկ միլիոնից ավելի հայեր ոչնչացրին: Այն, ինչ արեցին նրանք, ոճի է միայն մարդկության, այլև քաղաքակրթության դեմ: Եվ ահա այս ծաղկեփունջը՝ քաղված Հայաստանի հոգեկոր վարդաստանից, ոչ միայն մեծա-

րանք է ուղղված ցեղի հանճարին, այլև ամենաուժեղին բողոքն է հրեշների դեմ, որոնք իրականացրին անլուր մի ոճիր, սպանեցին այդ ցեղին<sup>5</sup>:

Ա. Չոպանյանը "La Roseraie d'Arménie" ժողովածուի առաջին հատորը նախապես պատրաստել ու նվիրել է XIV դ. և XV դ. սկզբի նշանավոր բանաստեղծ Առաքել Սյունեցու ստեղծագործությանը, որի միստիկ և ուսուցողական բանքերը, ինչպես և գլուխգործոցը ծավալուն «Աղամգիրք» պոեմը, ֆրանսերեն թարգմանությամբ ներկայացվում են ընթերցողին: Սյունեցու «Աղամգիրքը» դրվել է 1401 թ. և բոլորովին նորոթյուն էր հայ դրականության մեջ: Դրանում «Աստվածաշունչն» է՝ տրամաբանական նոր լուծումներով. վիճում են իրար հետ Աղամը և Աստված, ինչպես և Եվան ու Աստված: Նրանք քննում են կյանքի ու մահվան հավերժական խնդիրը: Այս հատվածները Ա. Չոպանյանը թարգմանել է բնադրին շատ հարազատ:

"La Roseraie d'Arménie" ժողովածուի երկրորդ հատորն ավելի հարուստ բովանդակությամբ ունի: Այս ժողովածուի մեջ կան Ներսես Շնորհալու, Աարգսի, Կոստանդին Երզնկացու, Ֆրիկի, Գրիգոր Խլաթեցու, Զաքարիա Գնունյանցի, Հովասափ Սեբաստացու, Հովհաննես Թլկուրանցու, Սիմեոն Ապարանցու, Նահապետ Քուչակի, Մովսես Եպիսկոպոսի, Մուրադ Խիկարի, Հակոբ Բատուկենցի, Բաղդասար Դպրի, Նաղաշ Հովնաթանի, Ջիվանու ստեղծագործություններից: Մարդիս բանաստեղծի անվան տակ Ա. Չոպանյանը ֆրանսերեն հրատարակել է Հովհաննես Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարիտին» քերթվածի մի մասը: Հեղինակի անունը քաղել է Կ. Կոստանյանցի «Հովհաննես Թլկուրանցին և յուր տաղերը»<sup>6</sup> գրքի վարկածի հիման վրա<sup>7</sup>: Ա. Չոպանյանը հետագայում, խորանալով Հ. Թլկուրանցու ստեղծագործության մեջ, վիպական այդ տաղը ճանաչում է որպես վերջինիս գրչի արգասիք: Կոստանդին Երզնկացու վերաբերյալ գրում է մի ընդարձակ նախաբան՝ ֆրանսերեն հրատարակելով մեծ թվով նրա տաղերից: Նրան շատ բարձր է գնահատում որպես այլաբանական քերթվածների հեղինակ, նշում է նաև, որ վերջինս եղել է մեր առաջին սիրո երգիչը:

"La Roseraie d'Arménie" ժողովածուի երկրորդ հատորում Ա. Չոպանյանը մանրամասն գրում է Խաչատուր Կեչառեցու մասին, որը նրա սիրելի հեղինակներից է: Հիշատակում է և բնորոշում Խ. Կեչառեցու պատվիրած մի ողբի մասին, որը նրա խնդրանքով պետք է գրեր ժամանակի նշանավոր դեմքերից մեկը՝ Ստեփանոս Օրբելյանը: Ա. Չոպանյանը գրում է. «Այս ժամանակ էր հենց մոտ 1300 թվականին, որ Ստեփանոսը (խոսքը Ստեփանոս Օրբելյանի մասին է — Ա. Դ.) գրեց իր ողբն էջմիածնի կաթողիկե եկեղեցու մասին, մի երկար պոեմ գրաբարով, դրական տեսանկյունից բավականին անհարթ, սակայն լի վշտագին պերճախոսության գեղեցիկ կտորներով, որում նշանավոր եկեղեցու փոխաբերության տակ Հայաստանը հիշում է փառահեղ անցյալը և ներկա ժամանակի ողբալի թշվառությունը:

<sup>5</sup> La Roseraie d'Arménie. T. 1, Paris, 1918, p. VII.

<sup>6</sup> Կ. Կոստանյանց. Հովհաննես Թլկուրանցին և յուր տաղերը. Թիֆլիս, 1892, էջ 56-57:

<sup>7</sup> Տե՛ս Հովհաննես Թլկուրանցի. Տաղեր (աշխատասիրությամբ էմ. Պիվազյանի), Երևան, 1960, էջ 267-268:

Դա հենց ինքը՝ Հայաստանն է, որին բանաստեղծը ոգեկոչել է խոսելու: Թվում է, թե հենց այդ ժամանակ էր, երբ իս. Կեչառեցին Ստեփանոսին<sup>8</sup> խնդրել էր գրել ողբը և նույն ժամանակ հենց ինքը ռամիկ ոճով դրեց իր հուզիչ ու պարզ ողբը «Արևելյան տան ավերման մասին»<sup>9</sup>: Ա. Չոպանյանը մի առանձին սիրով խոսում է ինչպես Ստեփանոսին՝ Արևելյան Մակեդոնացու պատմության համար գրած կապաների մասին<sup>10</sup>, որոնք հարստացրել են այդ պատմության հայկական խմբագրությունը:

Երկրորդ հատորում բազմակողմանի վերլուծված է նաև Ֆրիկի քնարերգությունը: Ֆրիկի կենսագրության շարադրանքում Ա. Չոպանյանը հետևում է այդ հեղինակի լավագույն գիտակի՝ Տիրայր Եպիսկոպոսի եզրակացություններին: Բանասերը խոսում է Ֆրիկի մի բանաստեղծության մասին, որ ինքը գտել է Բրիտանական թանգարանում պահվող հայկական ձեռագրական ժողովածուի մեջ՝ №107-ի տակ: Ֆրեգերիկ Կոնիբերի կազմած Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրացուցակի №107-ի տակ կարգում ենք. «Ձեռագրի երկրորդ մասը պարունակում է Ֆրիկի րանաստեղծությունները: Դրանք հայերի ու շրջանի խոսակցական լեզվով են և սկսվում են այսպես»<sup>11</sup>.

Թէ չի կայր սէր յաշխարհս կամ սէր չէր եղեալ,  
արարիչն առ մարդիկ սէր ե՞րբ ցուցանէր:

Գէտ Արել էր արդար, գաւակն Ադամայ,  
որ սիրովն աստուծոյ զընծայս նուիրէր:

Նոյ սիրովն ապրեցաւ ի ջրհեղեղէն,  
տապանքն զօրինակն աստուած ցուցանէր:

Այս հատվածը Ֆ. Կոնիբերն անգլերեն թարգմանել է հետևյալ ձևով. «Եթե աշխարհում սեր չկար, կամ Արարիչը չուներ սեր դեպի մարդ արարածը, ինչպե՞ս կարող էր սերը երևան գալ...»<sup>12</sup>: Ապա շարունակում է. «Այստեղ կան տասնվեց նման բանաստեղծություններ՝ նվիրված կրոնական և բարոյախոսական թեմաներին: Վերջինը խորագրված է...»<sup>13</sup>: Կոնիբերը մեջբերում է վերջին բանաստեղծության սկզբնատողը, այնուհետև դրա թարգմանությունը: Այն սկսվում է այսպես.

Ձարմանք մի մեծ լըսեցեք ու մտիք դրէք հաւասար,  
Ձաստուածութեան հանգամանքն ո՞վ կարէ պատմել միալար,  
Իւր աստուածութիւն անրաւ էութիւն անվճար,  
Իւր քաղցրութիւն է բարի և իւր դառնութիւն դժար,  
Խոնարհութիւն է բազում և համբերութիւն յերկար<sup>14</sup>:

<sup>8</sup> Ստեփանոս Օրբելյան կամ Ուռպելյան-Սյունյաց մետրոպոլիտ, պատմիչ, բանաստեղծ: 1280-ին ընդունել է հոգևոր կոչում, 1285-ին գնացել է Կիլիկիա՝ եպիսկոպոս ձեռնադրվելու: 1286-ին դարձել է մետրոպոլիտ Սյունյաց: Գլխավոր երկասիրությունը խիստ արժեքավոր պատմություն է՝ «Պատմութիւն նահանգին Սիսական», ունի նաև ուրիշ քերթվածներ, որոնցից երկուսը գրված են ինչպես Ստեփանոսին՝ Արևելյան Մակեդոնացու պատմություն:

<sup>9</sup> La Roseraie d'Arménie. T. 2, Paris, 1923, p. 65.

<sup>10</sup> Ա. Չոպանյանը երբեք չի օգտագործում կաֆա բառը, միայն՝ աղիկ:

<sup>11</sup> A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, by F. Conybeare, London, 1913, p. 276.

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> Նույն տեղում: Ֆրիկի այս բանաստեղծությունը չկա բանաստեղծի՝ 1982-ին լույս տեսած ժողովածուի մեջ (տե՛ս Ֆ. Բ. Կ. Տադևր. Երևան, 1982):

“La Roseraie d’Arménie” ժողովածուի երրորդ հատորը լույս տեսավ 1929-ին: Այս հատորում կան Ֆրիկի, Կոստանդին Երզնկացու, Հովհաննես Թլկուրացու, Առաքել Սյունեցու, Առաքել Բաղիչեցու, Գրիգորիս Աղթամարցու, Հովասափ Սեբաստացու, Ստեփաննոսի, Սարկավազ Բերդակեցու, Հովհաննես Եպիսկոպոսի, Դավիթ Սալաճորեցու տաղերը: Հատորի առաջարանում Ա. Չոպանյանն անդրադառնում է նախորդ երկու հատորներին և ասում, թե այս մեկը դալիս է լրացնելու նախորդները և դրանում չատ են միջնադարյան նկարազարդումները: Ինչ-որ առումով այս հատորը նվիրված է նաև հայ միջնադարյան մանրանկարչությանը: Երրորդ ժողովածուն, հիրավի, ավելի հարուստ է ու բազմազան: Դրանում հանդես են գալիս ոչ միայն հայ «պաշտոնական» գրականությունը ներկայացնող դեմքերը, այլև ընդհանուր գրողներ, որոնցից հասել են մեկ - երկու տաղ և որոնց կենսագրությունն անհայտ է, բայց գրել են ժամանակի դեղագիրտական պահանջի համեմատ ուշագրավ գործեր: Դրանցից են Ստեփանոսի «Գարուն և աշուն» տաղը, որը քաղված է Ա. Տեկանցի «Հայերդից», «Գովասանություն թռչնոց» տաղը: Վերջինս Կ. Կոստանյանցի մոտ կոչվում է «Վասն թռչնոց»<sup>15</sup>: Ա. Չոպանյանը հնարավորինս բանասիրական տեղեկություններ է հայտնում տաղերի հեղինակների մասին: Այս հատորի վերջին հատվածում կա «Անանուն երգեր» բաժինը, որում ժողովրդական երգեր են նվիրված կաքավին, աղվեսին, աղավնուն: Դրանց մեջ է նաև հանրահայտ «Կաքավի ողբը», ուր որդեկորույս ու սգավոր կաքավը խորհրդանշում է Հայաստանը: Պանդուխտ դարձած վշտահար կաքավը տաղի վերջում որոշում է ինքն իրեն կիզել: Հավանաբար, Ա. Չոպանյանը «Կաքավի ողբը» ժողովրդական տաղը քաղել է «Ազգագրական հանդես»-ից<sup>16</sup>: Այստեղ զետեղված է նաև «Մոկաց Միլզա» վիպական տաղի ֆրանսերեն թարգմանությունը: Հատորի առաջաբանն Ա. Չոպանյանն ավարտում է հետևյալ եզրահանգամար. «Բանաստեղծությունների այս խումբը ներկայացնում է միջնադարի արևելյան քրիստոնեության հայկական գրեթեամբ: Սրանք մեր ազգային քնարերգության առավել յուրօրինակ ու ինքնատիպ արտահայտություններն են, գուցե նաև մարդկային սրտի առավել թանկ քնարական հայտնություններից են»<sup>17</sup>:

1897 թ. մարտի 9-ին երիտասարդ ու եռանդուն Ա. Չոպանյանի ջանքերով Փարիզի Աշխարհագրական միությունում դաշլիճում տեղի ունեցավ Հայաստանի պատմությանը, գրականությանը, Արևելքում ունեցած դերին նվիրված գիտաժողով, որը նախագահում էր Անատոլ Ֆրանսը<sup>18</sup>: Զեկուցման հեղինակն Արշակ Չոպանյանն էր: Ֆրանսիացիներին ներկայացվեց հայ ժողովրդի անցած դժվարին ուղին, ընդհանուր գծերով մատուցվեց հայ հին ու միջնադարյան գրականությունը՝ սկսած գողթան երգերից: Զեկուցողն առանձնացնում է միջնադարյան այն հեղինակներին, որոնք ներկայացնում են ցեղի հավաքական հանճարը: Առաջին տեղում դնում է,

<sup>15</sup> Կ. Կոստանյանց. Նոր ժողովածու. պրակ Ա, Թիֆլիս, 1892, էջ 42-45:

<sup>16</sup> «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1905, №12, էջ 104:

<sup>17</sup> La Roseraie d’Arménie. T. 3, Paris, 1929, p. XIX.

<sup>18</sup> A. T c h o b a n i a n. L’Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient. Paris, 1897.

իհարկե, Մովսես Խորենացուն՝ նրան անվանելով հայերի Հոմերոս<sup>19</sup>: Ա. Չոպանյանը V դ. ևս երկու մատենագրի է առանձնացնում՝ Եղիշեին և Ղազար Փարպեցուն: Երկուսն էլ երգել են հայերի ընդվզումը պարսից մագդեական կրոնի ընդունման գեմ: Երկու հեղինակներն էլ ներկայացնում են Հայաստանի քրիստոնյա ժամանակները: Հետագա շարադրանքում ներկայացվում են Կիլիկյան Հայաստանի երկու երևելի գրական գեմքերը՝ Ներսես Շնորհալին և Ներսես Լամբրոնացին: Հիացմունքով է խոսում հատկապես Շնորհալու շարականների մասին: Սակայն գերագույն երևույթը հայ բանաստեղծության մեջ Ա. Չոպանյանը համարում է Գրիգոր Նարեկացուն և երկար խոսում նրա ստեղծագործության մասին: Նա լիովին ճշգրիտ է բնութագրում Նարեկացու երկի բարոյական և պատմական խորհուրդը, որը խիստ կարևոր է հետագա դարերի համար: Ջերմ տողերով է ներկայացվում նաև Արիստակես Լաստիվերցու պատմությունը, որում պատկերված են հայ ժողովրդի XI դ. կոտորածները:

1902 թ. Ա. Չոպանյանը հայ բանաստեղծների որոշ գործեր հրատարակում է Ֆրանսերեն՝ իր «Poèmes Arméniens Anciens et Modernes» գրքում, որի սկզբում դրված էր Ֆրանսիացի բանաստեղծ, թարգմանիչ Գարրիել Մուրեի մի ուսումնասիրությունը՝ հայ բանաստեղծության և արվեստի վերաբերյալ: Ուսումնասիրությունը ծավալուն է, և ինչպես հեղինակն է վկայում, երբեմն հիմնվում է Ա. Չոպանյանի այլ լեզուներով հրատարակված նյութերի վրա: Գ. Մուրեի կարծիքով նույնքան հուզիչ են հայ ժողովրդական պանդխտության երգերը: Նա հիացած է նաև իմպատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Երևանի բերդը» հատվածի բանաստեղծական զեղումներով: Խոսում է և գեյթունցիների ապստամբության մասին, հիշում Աբդուլ Համիդի կազմակերպած ջարդերը:

Նահապետ Քուչակի ստեղծագործությամբ Ա. Չոպանյանն զբաղվել է իր ողջ հետազոտական աշխատանքի ընթացքում: Առաջին մեծ դործը եղել է «Նահապետ Քուչակի դիվանը» գիրքը, որը լույս տեսավ Փարիզում, 1902-ին: Ա. Չոպանյանը շատ էր ափսոսում, որ ոչ մի տեղեկություն չունի Ն. Քուչակի մասին, ըացի մի քանի մանրամասներից, որ քաղել է Արիստակես Տեկանցի «Հայերդ» ժողովածուից: Նշանավոր մաավորականը ցավով նկատում է, որ երիտասարդ որոշ հայեր, որոնք եվրոպական կրթություն են ստացել, արհամարհանքով են նայում հայ դրականությանը: Ջարմանալի մի գիծ ունեն հայերը. իրենց թերությունները խոշորացնում են, «մեր ազգը մարդկության մրուրն են համարում: Իր թերությունները արիարար խոստովանելը մեծ է օգտակար հատկություն է, սակայն երբ այն հասնում է ծայրահեղ հիվանդագին աստիճանի, հավասարվում է ինքնասպանության, որը սաստիկ վնասակար է»<sup>20</sup>: Ա. Չոպանյանը հիշեցնում է, որ հայ հին գրականության լավագույն կեսը կորած է՝ աշխարհիկ լինելու պատճառով: Նա հիանում է Արիստակես Լաստիվերցու՝ ողբերգակ այդ պատմիչի երկով, Գր. Նարեկացու աղոթքներով, Ն. Լամբրոնացու քարոզներով, Ն. Շնորհալու շարականներով:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 42:

<sup>20</sup> Նահապետ Քուչակի դիվանը: Քննական ուսումնասիրությամբ հրատարակեց Ա. Չոպանյանը, Փարիզ, 1902, էջ 24:

Միջնադարյան աշուղները՝ հատկապես Քուչակը, վկայում են, որ հայը երկնքից բացի երգել է նաև երկիրը և այն էլ հոյակապորեն: Չոպանյանն ասում է, որ չի կարելի հետամնաց թուրքի, քրդի, պարսիկի լծի տակ կքած հայից պահանջել գերմանացիների և ֆրանսիացիների մտավոր զարգացումը, թեև «Աբովյանի ոճը ամենեն անձնական ու ամենեն հզոր ոճերեն մեկն է, որ երևցած ըլլա ժԹ գարու որևէ ազգի գրականության մեջ»<sup>21</sup>: Ա. Չոպանյանը հիշեցնում է, որ հայերը քաղաքական ամենածանր պահերին չկորցրին իրենց լեզուն ու գրականությունը, մինչդեռ հրեաներն ու ասորիները կորցրին իրենց լեզուն, իրենց լեզվով չեն խոսում բելգիացիներն ու չվեյցարացիները. «Մինչ մենք պահպանում ենք համառաբար մինչև այսօր մեր լեզուն: Հայր փոքր ազգերու ամենեն մեծերեն մեկն է, եթե ոչ ամենեն մեծը»<sup>22</sup>: Ա. Չոպանյանի կարծիքով՝ քուչակյան հայրենները բավական են, որ հայ ցեղը հարգանքի արժանի լինի:

Մեկ տարի անց՝ 1903-ին, Ա. Չոպանյանը եվրոպացի ընթերցողի սեղանին է դնում մի նոր դիրք՝ «Chants populaires Arméniens» («Հայ ժողովրդական երգեր»), որի առաջաբանը գրել է Պոլ Ադամը: Նա իր խոսքի սկզբում անդրադառնում է միջազգային քաղաքական հարցերին՝ գրելով. «Մի ազգ, այդքան դիմացկուն, չնայած կոտորածների, ամայացման, չնայած իր երկրի վրա արյունոտ հարձակումներին՝ պարթևների, հռոմեացիների, հույների, արաբների ու թուրքերի կողմից, մի ազգ, որը երբեք չձուլվեց, այդպիսի ազդի պիտի հուսա իր քաղաքացիների համար լավագույն օրերի վերադարձը»<sup>23</sup>: Պ. Ադամը համոզված է, որ հայ ժողովրդական երգերի միջոցով ֆրանսիացի ժողովուրդը կծանոթանա Արևելքի ոգուն, մի հին ժողովրդի պանթիստական զգացմունքներին: Նա հիացած է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմով, որի աղոթքներում ու նրա կրկնակներում երևում է հայկական հանճարը: Նա մի հատված է մեջբերում մատյանից՝ Ա. Չոպանյանի թարգմանությամբ: Բարձրագույն քնարերգության նմուշ է համարում Նահապետ Քուչակի հայրենները: Նույն հիացական տողերով վերապատմում է «Ասլան աղա» ժողովրդական վիպերգի բովանդակությունը: Պ. Ադամի նախաբանին հետևում է Ա. Չոպանյանի ընդարձակ առաջաբանը, որն զբաղեցնում է գրքի XIX-LXXXII էջերը: Բառացի կրկնում է Ա. Ֆրանսի հայերին տված բնութագիրը, որը լի է այդ ժողովրդի նկատմամբ տածած խոր համակրանքով<sup>24</sup>: Խոսում է լորդ Բայրոնի մասին, որը Վենետիկի Միսիթարյան միաբանությունում ուսումնասիրել է հայերի պատմությունը և սովորել նրանց լեզուն: Գրում է

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 28:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Անատոլ Ֆրանսի և Արշակ Չոպանյանի ջերմ բարեկամության մասին մանրամասն գրված է էգմոնգ Խայադյանի (E. K h a y a d j i a n. Archag Tchobanian et le mouvement armenophile en France («Արշակ Չոպանյանը և հայամետ շարժումը ֆրանսիայում», տպագրված է Ֆրանսիայում, 2001) գրքում (էջ 100-105 և այլն): 1894-1896 թթ. հայկական ջարդերից ցնցված՝ Անատոլ Ֆրանսն ուղերձ է հղում «Ֆիգարո» թերթին կոչ անելով օգնել քրիստոնյա հայերին, խստորեն հայտարարում է, որ եվրոպան քրիստոնյա է, և Ֆրանսիան, եվրոպական քրիստոնյաների գլուխ անցած, պետք է օգնի, կերակրի և հագցնի Արևելքի քրիստոնյա որդիներին ու գուստերին, որոնք ուրիշ պաշտպան չունեն (էջ 105): Էդմոնգ Խայադյանն իր գրքում (էջ 101) նաև նշում է, որ հրատարակել է Ա. Չոպանյանի նամակները ուղղված Ա. Ֆրանսին:

մի եզակի հայի մասին (ի պատիվ որի արձան է կանգնեցված)՝ ժան Ալթեն անունով, որն Ավինյոն է եկել Պարսկաստանից մոտավորապես 1724 թ., հաստատվել է այդ քաղաքում, զբաղվել տորոնի առևտրով և Ֆրանսիայի հարավի կլիմային է հարմարեցրել արևելյան մի բույս, որը բուսաբանները նրա անունով կոչել են «Althenie» («Ալթենի»):

1906 թ. Փարիզում լույս է տեսնում Ա. Չոպանյանի նոր աշխատությունը՝ «Les Trouvères Arméniens» («Հայ աշուղներ»): Աշխատությունն ունի ընդարձակ առաջաբան: Դրանում ընդգրկված են՝ Նահապետ Քուչակի, Հովհաննես Պոլզի, Կոստանդին Երզնկացու, Առաքել Բաղիչեցու, Հովհաննես Թլկուրանցու, Գրիգորիս Ազթամարցու, Ղազար Սեբաստացու, Ներսես Վանահոր, Երեմիա Քյոմյուրճյանի, Նաղաշ Հովնաթանի, Սայաթ-Նովայի, Ղունկիրանոսի, Զիվանու գործերը: Գրքի առաջաբանում Ա. Չոպանյանը ներկայացնում է անգլիացի նշանավոր գրող, պետական դործիչ Ջեյմս Բրայսի կարծիքն իր «Հայ ժողովրդական երգերը» գրքի վերաբերյալ: Վերջինս ֆրանսիական ակադեմիայի կողմից արժանացել էր մրցանակի: Զ. Բրայսը դրում է. «Շատ կտորներ ունեն մեծ գրավչություն և թարմություն, ազգային տարբերակիչ մի քանի բնույթով, որոնք դրանց տալիս են առեղծվածային բնույթ, գրանցում կա արևելյան ճաշակ. այս քնարերգությունն ամբողջովին տարբեր է արաբականից ու պարսկականից»<sup>25</sup>:

Հայ աշուղները կատարում էին երկու տեսակի երգեր: Նրանք երգում էին արևելյան, մահմեդական երգեր՝ թուրքերեն, պարսկերեն, քրդերեն: Այդ ազգերի հանրաճանաչ շատ աշուղներ ազգությունը հենց հայ են եղել և այլալեզու երգերում դրել են իրենց ազգային, քրիստոնեական կնիքն ու մտածողությունը: Իսկ հայ հին գուսանները երգել են զուտ ազգային երգեր: Ա. Չոպանյանի կարծիքով Կիլիկյան թագավորության ժամանակ կիրթ խավի խոսակցական հայերենը, որն օգտագործվում էր գուսանների կողմից, սկսեց դիպել որպես գրական լեզու: Թագավորական պալատին մոտիկ կանգնած հեղինակներն իրենց գասական լեզուն մոտեցնում էին խոսակցականին: Դա երևում է Ներսես Լամբրոնացու Լևոն I-ին ուղղված նամակից, Վարդան Մեծի՝ Հեթում I-ին ուղղված թղթից, ինչպես նաև Գրիգոր Անավարզեցու՝ Հեթում II-ին առաքած նամակից: XII դ. Կիլիկիայի հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալին, որն այդ ժամանակահատվածի նշանավոր գրողներից էր, իր գործերը գրում էր դասական հայերենով, սակայն ժողովրդի համար գործածում էր խոսակցական հայերենը և հենց գրանով գրեց իր հանելուկները, որոնք հորինել էր ժողովրդական հավաքներում օգտագործելու համար: Նույն ժամանակահատվածի անվանի թշկապետ Մխիթար Հերացին իր «Ջերմանց մխիթարություն» բժշկական աշխատությունը գրել է խոսակցական լեզվով: Ա. Չոպանյանը հետևյալ մեջբերումն ունի. «Եւ արարի զսա գեղջուկ և արձակ ըրարառով, զի դիւրահաս լիցի ամենայն ընթերցողաց, առ ի յիշատակել զմեզ և խնդրել թողութիւն մեղաց ի մարգասիրէն Աստուծոյ»<sup>26</sup>: XIV դ. միջին հայերենը գերիշխող լեզու էր ոչ միայն Կիլիկյան Հայաստանում, այլև բուն Հայաստանում:

<sup>25</sup> Les Trouvères Arméniens. Paris, 1905, p. 5.

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 15: Տե՛ս Մ ի ի թ ա ը Հ ե ռ ա Յ ի. Ջերմանց մխիթարութիւն. Վենետիկ, 1832, էջ 8:

նում: Վարդան Արևելցու «Տիեզերական պատմություն» և Մաղաքիա Աբեղայի «Պատմություն վասն ազգին նետողաց» երկերում զգացվում է խոսակցական լեզվի հույժ ազգեցությունը գրաբարի վրա: Չոպանյանը նկատում է, որ XIV դ. բանաստեղծ Կոստանդին Երզնկացին գրում էր խոսակցական լեզվով: Չոպանյանը բացահայտում է կրթված բանաստեղծների լեզվական հարստության գաղտնիքը: Գիտնական բանաստեղծները, գրելով խոսակցական լեզվով, օգտվում էին գրաբարյան բառապանծից և քերականական ձևերից: Նրանց ոճի մեջ զգալի է Աստվածաշնչի և նախորդ դարերի հայ հեղինակների լեզվաոճական բարերար ազգեցությունը: «Հայ աշուղներ» ժողովածուի մեջ Ա. Չոպանյանը պատվավոր տեղ է հատկացրել Սայաթ-Նովային:

Ա. Չոպանյանի համար բանասիրական իսկական գյուտ է դարձել Նաղաշ Հովնաթանը և նրա նկարչական գերդաստանը: Այդ մասին նա 1910 թ. հրատարակում է մի նոր գիրք: Չոպանյանն իրավացիորեն նկատում է, թե հայերը հաճախ տրտնջում են, որ իրենց նախնիները քիչ բան են թողել, աղքատիկ է նրանց թողածը և արվեստով միօրինակ: Սակայն երբ անցյալի մեջ որոնումներ են կատարվում, պարզվում է, որ բողոքելու առիթ ունեն ոչ թե նոր սերնդի հայերը, այլ նրանց նախնիները: Չոպանյանը գրում է, որ բանաստեղծ ու նկարիչ Նաղաշ Հովնաթանի մասին շատ բան չգիտի, Հովնաթանյան նկարիչների մասին նույնպես: Ուսումնասիրության սկզբում Ա. Չոպանյանը ներկայացնում է Նաղաշ Հովնաթան բանաստեղծին: Ըստ վերջինիս որդու՝ Հովնաթանը ճամփորդած պետք է լինի Պարսկաստանում, Թուրքիայում, Եվրոպայում, նա իր ժամանակին «հեղինակավոր բանաստեղծ մարդու պատկառելի դիրք մը ունեցած է, ողջմիտ, սրամիտ մարդ, ավանդասեր, եկեղեցասեր, բայց ոչ տիրացու, ընդհակառակն՝ տիրացուական բարքերուն, տգետ կրոնամոլության, փնթի ու ստորուկ տերտերականությունն ատող ու հեգնող, ինչպես կտեսնենք «մոխթերու» մասին կծու երգիծաբանությունն»<sup>27</sup>:

Չոպանյանը համեմատական քննությանը Նաղաշ Հովնաթանին զուգադրում է Նահապետ Քուչակի և Սայաթ-Նովայի հետ: Նա իրավացիորեն վերջիններիս առավել գերազանց է համարում Հովնաթանից: Ն. Քուչակն իր բանաստեղծական ներշնչման այլազանությամբ, գաղափարների նորությամբ և ճոխությամբ, ոճի գերագույն սեղմությամբ ու նրբությամբ, ունի զգացման ներուժ և բացատրության չքնաղ գյուտեր: Սայաթ-Նովան էլ իր հերթին բանաստեղծական ավելի կատարյալ երևույթ է քան Հովնաթանը: Սակայն այս ամենով հանդերձ՝ Նաղաշ Հովնաթանը երևույթ է հայ գրականության մեջ: Նա նման է պարսից բանաստեղծ իսլամին՝ «կյանքն աղվոր է, բայց վաղանցուկ, ուրեմն պետք է վայելել նրա ամեն մի պահը, պետք է վայելել բնությունը, կնոջը, գինին, որոնք բարության և եղբայրության հետ կյանքի միակ արժեքներն են»<sup>28</sup>: Ուսումնասիրության մեջ Ա. Չոպանյանը զուգահեռ համեմատություններով տողեր է թվարկում Ն. Քուչակից ու Ն. Հովնաթանից:

<sup>27</sup> Ա. Չոպանյան. Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը. Փարիզ, 1910, էջ 11:

<sup>28</sup> Նույն տեղում:

«Ներածություն» երկրորդ մասը կոչվում է «Հովնաթան Հովնաթանյան նկարիչը», ընդգրկում է հետազոտության 18–31-րդ էջերը և ավարտվում է հետևյալ եզրակացությամբ. «Հայ դրականության պատմության մեջ, որ դեռ այնքան պակասավոր ու կիսակատար է գրված և հայ գեղարվեստի պատմության մեջ, որ դեռ բնավ չի գրված, Ն. Հովնաթան րանաստեղծը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչն իրենց հատուկ գլուխը պիտի ունենան: Ու այս հայտնությունը, զոր կկատարեմ, պիտի մղի թերևս ուրիշներ Հայաստանի և այլ տաճարներուն, վանքերուն մեջ, ինչպես և ձեռագիրներուն խորը՝ անծանոթ մնացած հայ վարպետներ երթալ փնտրելու, մոռացութենէ դուրս հանելու և մեզի՝ ինչպես օտարին ճանչցնելու»:

1912-ին Փարիզում Ա. Չոպանյանը հայերեն հրատարակում է մի ուսումնասիրություն, որը կոչվում է «Հայ էջեր: Մեր նախնյաց բանաստեղծությունն ու արվեստը»: Ժողովածուն շատ հարուստ է: Այն սկսվում է «Տաղ էջմիածնի՝ անուշ ու գեղեցիկ» ստեղծագործությամբ: Կան բավական թվով անանուն տաղեր, սակայն շատ են նաև հեղինակային գործերը՝ Հովհաննես Թլկուրանցի, Հովասափ Սեբաստացի, Յրիկ, Գրիգոր Նարեկացի, Քերովբե, Պաղտատար Դպիր, կան «Պղնձե քաղաքի պատմության» և «Ալեքսանդրի պատմության» կաֆաները և այլ գործեր: Այս ժողովածուի ստեղծմանը շատ է նպաստել 1908 թ. էջմիածին կատարած Ա. Չոպանյանի այցը: Նա այնտեղից վերագրված է դիտական նյութի մեծ պաշարով և մտահղացումների բեռով: Հատորում գետեղված են էջմիածնի Մայր տաճարում գտնվող մի շարք եզակի գեղարվեստական առարկաների լուսանկարներ: Իր այս երկասիրությունը Չոպանյանն անվանում է «Ալբոմ հայ արվեստի և բանաստեղծության անծանոթ մնացած էջերի»: Հատորում կան նաև բազմաթիվ նկարներ աստվածաշնչյան թեմաներով:

Տեսական ու գործնական կարևոր հարցադրումներ է պարունակում 1926-ին Փարիզում լույս տեսած «Մեր գրականությունը» գրքույկը, որտեղ Ա. Չոպանյանն առաջ է քաշել հետևյալ հարցադրումները և տվել դրանց պատասխանները՝

- ա) Մեր ազգային, մշակութային երկն, այսօրն ու վաղը:
- բ) Հայրենիքի և գաղութներու գրական գործունեությունը:
- գ) Արտասահմանի հայ գրական ճիգն ինչպես պետք է լրացնե Հայաստանի մեջ կատարվող մտավոր վաստակը:

Այս հարցադրումները և դրանց տրված պատասխանները խոսուն ձևով ապացուցում են, որ հայ հին գրականությանն ու արվեստին այգքան նվիրումը նաև նպատակ է ունեցել՝ հենվելով հայ գրականության հին ձեռքբերումների վրա, ապահովել դրա ընթացիկ զարգացումը և, իհարկե, ապագայի առաջընթացը: Չոպանյանն առաջ է քաշում մի հիմնարար խնդիր ևս: Դասական, միջնադարյան գրողների երկերն անհրաժեշտ է թարգմանել աշխարհաբար, կենսագրական ու քննական ծանոթագրություններով և մատչելի հասցնել հասարակական բոլոր խավերին<sup>29</sup>: Չոպանյանը կենսականորեն անհրաժեշտ է համարում, որ ամեն հայ երիտասարդ կարդա

<sup>29</sup> Այս կարևորագույն խնդիրը՝ սկսած XX դ. 40-ական թվականներից առ այսօր, թարգմանական բազմաթիվ հրատարակություններով լուծվում է հիմնականում մայր հայրենիքում:

Փափստոս, Խորենացի, Եզնիկ, Փարպեցի, Եղիշե, Նարեկացի, Շնորհալի, Հովհ. Երզնկացի, Քուչակ, Կոստանդին Երզնկացի, Թլկուրանցի, Աղթա-մարցի, Բագրատունու «Հայկը», Ալիշանի գրարար նվազները: Նա Հայ գրականության զարգացման խթաններից մեկն էլ համարում է օտար գրա-կանություններից արված թարգմանությունները:

Հայ մշակույթի և գրականության անխոնջ նվիրյալը 1936 թ. մարտի 29-ին Սորբոնի համալսարանի Մեծ սրահում իրականացնում է շատ կարևոր մի միջոցառում՝ գիտական հեղինակավոր ուժերով անցկացնում է Աստվածաշնչի Հայերեն թարգմանության 1500-ամյակը: Ընթերցվում են նշանավոր Հայագետ Անտուան Մեյերի և Բյուզանդագետ Շարլ Դիրի նա-մակները, զեկուցումներով հանգես են դալիս Ա. Չոպանյանը, Նիկողայոս Ադոնցը, Գարեգին Հովսեփյանը և Ֆրանսիացի Հայագետները: Ա. Չոպան-յանի զեկուցումն ամբողջովին նվիրված էր միջնադարյան Հայ քնարեր-գությունը: Այն կոչվում էր «Աստվածաշնչի թարգմանությունը և Հայ քնարերգությունը»<sup>30</sup>: Նա իրավացիորեն այդ թարգմանությունը համա-րում է մեր գրականության ոկիզբը, հոգևոր հզորության սկիզբը, որով Հայ ազգը դիմակայեց բոլոր փորձություններին:

Ա. Չոպանյանը Մանուկ Աբեղյանի «Հին գուսանական ժողովրդական երգեր» ուսումնասիրությունից տեղեկացել էր, որ Երևանի Պետական թանգարանում, էջմիածնի Մատենադարանում կան քուչակյան Հայրենե-րի ձեռագրեր: Երբ հինգ շաբաթով եղել է էջմիածնում և Երևանում, ընդօ-րինակել է այդ բոլոր ձեռագրերի օրինակները: Նրա կարծիքով այս հատո-րը տասն անգամ ավելի ճոխ է, քան 37 տարի առաջ «Քուչակի դիվանը» վերնագրով լույս տեսածը<sup>31</sup>: Նա Հայրենների ձեռագրային հարստութ-յունն անվանում է ոսկե հանք: Չոպանյանն ըստ արժանվույն գնահատում է Քուչակի Հայրենները, գնահատում նախորդների՝ Ա. Տեկանցի, Կ. Կոս-տանյանցի, Մ. Աբեղյանի կատարածը:

«Հայրեններու բուրաստանը» գիրքը (1940 թ.) ունի գիտական բառա-րան, որի մեջ ամեն բացատրվող բառի դիմաց դրված է, թե միջին Հայե-րե՞ն է, Ակնա բարբա՞ն է, գավառարարբա՞ն է, արաբերե՞ն է, պարսկերե՞ն, թե՞ թուրքերեն: Բառարանն ընդգրկում է գրքի 490–544 էջերը:

Չոպանյանը վերլուծաբար ներկայացնում է սիրո, պանդխտության և խրատական Հայրենների բովանդակությունը: Նա Հայրենները կոչում է Ակնեցի աշուղի գործեր՝ գրված Ակնա բարբառով: Խոսում է նաև Հայրեն-ների տաղաչափության մասին. «Հայրենի հինգնտասնոտյան մեծաչուք ու օրորուն տողը, որ միակտուր սլացք մը ունի, երկուքի է կտրվում»<sup>32</sup>: "Les Trouvères Arméniens" հատորը կարգալուց հետո գերմանացի բանաստեղծ Հանս Պետկեն, որն իր երկրում հայտնի է Հաֆեզի թարգմանություննե-րով, Ա. Չոպանյանին ուղղված նամակում գրում է. «Քուչակն այն բա-նաստեղծն է, որ կփնտրեի և գտա...»<sup>33</sup>: Նա Չոպանյանից արտոնություն է խնդրում ֆրանսերենից գերմաներեն թարգմանել այդ Հայրենները:

<sup>30</sup> Celebration solennelle du quinzième centenaire de la traduction Arménienne de la Bible. Paris, 1938, p. 30-46.

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 112:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 113:

1924 թ. հրատարակվեց այդ գեղադիր հատորը՝ «Armenische Nachtingall» («Հայ սոխակ») խորագրով: Ահա մի հատված այդ առաջաբանից. «Այս հատորով առաջին անգամ Գերմանիո մեջ կը ներկայացվի Արևելքի ամենեն փայլուն սիրերգուհիներն մեկը՝ Նահապետ Քուչակը, որ այս գրքի խորագրի մեջ կանվանվի «Հայ սոխակը»: Արևելքի ամենեն կախարդիչ դեմքերից մեկն է այս երգիչը: Սեր նվագող իր տավիղին արբեցուցիչ դաշնակովթյան մեջ տեղ ունին թե բուն կիրքը, թե քնքուշ հեղուկությունը: ...Աշուղ էր Հայաստանի ամենանշանավոր բանաստեղծն ևս՝ Նահապետ Քուչակ: Մենք ուրիշ բան չենք գիտեր իր մասին, ոչ իսկ իր ապրած դարը: Հայտնի է որոշապես, հավանորեն, տասնվեցերորդ դարը»: Պետկեն թարգմանաբար ներկայացնում է 112 բանաստեղծական կտոր: Նա դրում է. «Սիրո այս մոլեգնությունը այդ տաղերի կշռույթին ու պատկերներուն մեջ գրեթե է իր զարմանալի արտահայտությունը, այսպիսով ան արբեցնող, կախարդող տպավորություն մը կը գործե»<sup>34</sup>:

Գրիգոր Նարեկացու անձին և գործին Ա. Չոպանյանն անդրադարձել է "L'Arménie, son histoire, sa littérature" («Հայաստանը, նրա պատմությունը և նրա գրականությունը») զեկուցման մեջ, որտեղ առանձնակի տեղ է հատկացնում Նարեկացուն՝ նրան համարելով հայ քնարերգության մեծագույն հայտնությունը<sup>35</sup>:

1936 թ. կարգացած "La traduction de la Bible et la poésie Arménienne" («Աստվածաշնչի թարգմանությունը և հայ քնարերգությունը») զեկուցման մեջ Ա. Չոպանյանը Գրիգոր Նարեկացուն վերստին ներկայացնում է որպես մեծ նորարար, որն իր «Մատյան ողբերգության» Գ զլխի Բ և Գ հատվածներում Աստծուն բացատրում է, թե մատյանը գրվել է աշխարհասփյուռ համայն քրիստոնյաների համար և այն հրաշագործ է, հոգինեքը փրկող ու անմահություն բերող:

1940-ին լույս տեսած «Հայրեններու բուրաստանը» գրքում Ա. Չոպանյանը Նարեկացուն համարում է բովանդակ մարդկության հոգու թարգմանը, որի գլուխգործոցում տեսնում ենք «հավիտենական մարդ էակին անհատական էությունը զղրող դրամաներից մեկը»: Առաջին հատվածում Ա. Չոպանյանն անդրադառնում է հայ հեթանոսական կրոնի աշխարհայեցողությանը, որը եղել է իրական կյանքի կենսասիրությանը լեցուն, զրադաշտական կրոնի եղբայրը՝ լուսավոր երգերով, կրակի և լույսի պաշտամունքով, ուժի, մարմնի գեղեցկության, խիզախության փառաբանումով: Բանասերի կարծիքով աշխարհատյաց վանականության ոգին ուշ է մտել հայ կյանքի մեջ: Հայ եկեղեցու նահատակներն անգամ աշխարհասեր են եղել: Եվ միակ միստիկական դեմքը, «ամենեն հրաշալի դեմքերեն մեկը ընդհանուր միստիկական գրականության»՝ Նարեկացին է<sup>36</sup>: Ա. Չոպանյանն իրավացիորեն նկատել է, որ Նարեկացու բոլոր գրվածքներում մտայնության բացարձակ նույնությունն կա: Գրիգոր Նարեկացին Աստծու գաղափարով հիպնոսացած միտքն է, բայց նա սխուլաստիկ աստվածաբան չէ, Աստված նրա համար պարզ բանաձև չէ, այլ անհունը, ան-

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 125:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 60:

<sup>36</sup> Ա. Չոպանյան. Երևան, 1988, էջ 297:

ծանոթը, որ իրեն բոլոր կողմերից սեղմում է, որի խորհուրդը շոշափելի վերքի նման իր հոգին կցավեցնե: Աստծու ընկալման խիստ անհատական գաղափարը կազմում է Նարեկացու գլխավոր երկի՝ «Մատյան ողբերգության» պոեմի բովանդակությունը: Այստեղ բանաստեղծը մի անվերջ խոսակցություն է սկսում Աստծու հետ. «Աղոթքին ընդհանուր տխրողսն արդեն լավագույն բացատրությունն է ամբողջ գրքին՝ «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծոյ»<sup>37</sup>: Ա. Չոպանյանը «Նարեկի» մտային կառույցը բաժանում է հետևյալ հատվածների մեջ՝

«ա) Պաշտողական գովեստ Աստծու մեծություն:»

բ) Զգվանք իր անձի համար, գիտակցություն իր ոչնչության՝ Աստծու բազդատմամբ:

գ) Վախ ինքնիրմե, սարսափ փորձությունե, և խնդրանք չարեն ազատելու:

դ) Բաղձանք Աստծու շնորհն ընդունելու և հողաքարչ պաղատանք ատոր համար:

ե) Հույս Աստվածածնի վրա, որի բարեխոսությունն ամենագոր է:

զ) Հավատք Աստծու բարություն վրա, հույս փրկության»:

Իսկ ողջ պոեմի գլխավոր մոտիվն Աստծու մեծության գովեստն է: Ա. Չոպանյանի կարծիքով եվրոպական մատենագրության մեջ դժվար թե Գրիգոր Նարեկացու հետ բաղդատվելիք գործ գտնվի. «Արևելյան աղերսագիր մը և արևմտյան մեռելի ողբ մը, — ահավասիկ «Նարեկ»-ին աղոթքը»<sup>38</sup>: Ցնցող է մահվան տեսարանը, որը մոռանալ է տալիս անդամ Շեքսպիրի պատկերածը. նրանում բառերը հրաշեկ երկաթի նման շաչում են՝ ներկայացնելով «մարմնի տարաբախությունը»:

Ուսումնասիրության Գ մասում Ա. Չոպանյանը քննում է Գրիգոր Նարեկացու լեզվի և ոճի խնդիրները, նրա երկերում տեսնում է Աստվածաշնչի և սուրբ հայերի վարքագրության ոճական ազդեցությունը: Նրա ոճը եզակի է ողջ հայ գրականության մեջ, եզրակացնում է բանասերը: Չոպանյանի կարծիքով՝ Նարեկացին պետք է որ իմանար հունարեն. «Նարեկացիին համար, հունարեն գիտցած ըլլալը անհրաժեշտ է սակայն, բացատրելու համար ոճն ըմբռնելու նրբարվեստ եղանակը»<sup>39</sup>: Նա մերժում է ումանց կողմից դիտական շրջանառության մեջ դրված արաբական բանաստեղծության ազդեցության խնդիրը, նախ հավանական չհամարելով Նարեկացու արաբերեն իմանալը, և երկրորդ՝ կրոնական «խտրոցը» արգելք պիտի լիներ, որ հայ վանականներն ուսումնասիրեին այլ կրոնի լեզուն ու գրականությունը: Չոպանյանը նկատում է, որ կրկնությունն արևելյան գրականության մեջ սովորություն է<sup>40</sup>, այն կա նաև Աստվածաշնչում, դրանք հարգի են եղել հեթանոս ճարտասանների մոտ: Կրկնություններ կան նաև Վիկտոր Հյուգոյի պոեզիայում: Սակայն Նարեկացու կրկնություններն ստացել են հատուկ դրոշմ և ձև, որ միայն իրենն են: Բանաս-

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 305:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 311:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 314:

<sup>40</sup> Մաղեղական կրոնի սրբազան գիրքը՝ «Ավեստան», լի է կրկնություններով (տե՛ս Avesta. Livre sacré du zoroastrisme. Paris, 1881):

տեղծը, լցված իր գաղափարով, չի բավարարվում միայն մի բացատրությունամբ, այլ գրանք կրկնում է նորանոր նրբերանգներով: Ա. Չոպանյանը խոսում է նաև Նարեկացու մշակած տաղաչափական ձևի մասին. «Նարեկացիի ոճի մյուս հատկանիշն ալ, պարբերության կշռությունը, իրեն սեփական է»<sup>41</sup>: Բանասերի կարծիքով՝ Նարեկացու տաղերի արվեստն ավելի կատարյալ է: Դրանք գողթյան երգերի փշրանքների և քրիստոնեական շարականների հետ հայ հին բանաստեղծության գանձերն են. Գրիգոր Նարեկացու տաղերի մեջ կան բանաստեղծական կատարելություններ, որոնք թվում է, թե միայն շեքսպիրներն ու վերլեններն են գտել: Չոպանյանը հատվածներ է բերում «Մեղեգի ծննդյան» և «Տաղ վարդավառին» քերթվածներին: Տաղերի վառ պատկերները, ծաղիկների, արևի գովքը, բնության անուշ բույրերի պատճառած ուրախությունը, բանաստեղծական վանկերի լուսավոր երաժշտությունը հակապատկերն են մատյանի մռայլ ողբերի: Դրանք հոգևորականի հոգու մեջ «հեռավոր առհավության ձայների զարթումն են»<sup>42</sup>:

Ուսումնասիրության Դ հատվածը Գրիգոր Նարեկացու մասին ասվածի ամփոփումն է: Չոպանյանը յուրովի հայտարարում է համայն հայությունը, որ հպարտությամբ ու հիացմամբ պետք է ողջունեն հայ հին գրականության տիտանին, նրան դուրս բերեն աղոթք գրողի կրոնական գույնից, որով նրան սահմանափակում են, դնեն իր տեղը, գրական մեծ հանճարների օգակարկառ բարձունքին, և այլևս չասենք, թե հայ բանաստեղծությունը հսկա չունի:

1935 թ. Ա. Չոպանյանը հրատարակել է մի հետաքրքիր գիրք, որը կոչվում է «Վիկտոր Հյուգոն, Շատոբրիանը և Լամարտինը հայ դրականությունից մեջ»: Այստեղ զետեղված է նաև Բերբերյան հայկական քոլեջում Վիկտոր Հյուգոյի մահվան առիթով հնչած Ա. Չոպանյանի խոսքը, որում կան հետևյալ տողերը. «Հանճարները հայրենիք չունեն: Բնությունը վառում է այդ հազվագյուտ ջահերն ամբողջ աշխարհի համար: Այդ մեծ հոգիները չեն կարող պարփակվել մի առանձին երկրի նեղ սահմաններում, և նրանց միտքն այնպես, ինչպես կանցնի դաբերի արգելքների միջով, այնպես էլ կբովանդակի իր մեջ ողջ մարդկությունը: Այն բարձունքից, որտեղ կանգնում են այդ արծիվները, այլևս չեն տարբերակվում այն փոքրիկ գծերը, որոնք անջատում են երկրները, և հակառակ իր լեռներին ու գետերին՝ աշխարհը նրանց աչքին մի հարթավայր է, որ պատկանում է մեկ ընտանիքի, որը հենց ինքն է՝ մարդկային հասարակությունը»<sup>43</sup>: Ահա հենց այսպիսի համամարդկային մի հանճար է, ըստ Չոպանյանի, նաև Գրիգոր Նարեկացին, որը պետք է դառնա նաև «համայն մարդկության սիրելին»:

Ի մի բերելով վերոշարադրյալը, կարելի է հանգել հետևյալ ուշադրավ եզրակացություններին.

- 1) Ա. Չոպանյանը հայ հին դրականությամբ զբաղվել է մոտ 60 տարի, այսինքն՝ իր ստեղծագործական ողջ կյանքում:

<sup>41</sup> Ա. Չոպանյան. Երկեր, էջ 316:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 320:

<sup>43</sup> A. Tchobanian. Victor Hugo, Chateaubriand et Lamartine dans la littérature Arménienne. Paris, 1935, p.41.

- 2) Հին գրականությունը զբաղվելը Չոպանյանի համար ունեցել է հրատապ արդիական նշանակություն. անցյալի մշակութային արժեքների և գրականության բարձրացումով ջանում էր նպաստել ժամանակի հայ գրական ու մշակութային կյանքի զարգացմանը:
- 3) Չոպանյանը, հատկապես հայ հին քնարերգությունը, ֆրանսերենով դրեց միջնադարյան հանրության սեղանին, և եթե դանգվածային ընթերցողը չկարդաց միջնադարյան մեր բանաստեղծներին, ապա հայ և օտար հայագիտական շրջաններն ու գրականագետները գիտական նոր լիցքեր ստացան այդ գրքերից:
- 4) Հայ միջնադարյան հեղինակների դործերը թարգմանելիս՝ Չոպանյանը դրանց կցում էր գիտական ուսումնասիրություններ, որոնք բանասիրական մեծ արժեք ունեն:
- 5) Չոպանյանն իր նյութերը քաղում էր հայ միջնադարյան ձեռագրերից՝ դրանց նկատմամբ ցուցաբերելով քննական մոտեցում, արժևորելով դրանք:
- 6) Ն. Քուչակին, Ն. Հովնաթանին, Գ. Նարեկացուն, Հ. Թլկուրանցուն, Ֆրիկին և միջնադարյան մյուս տաղասացներին նրա տված գնահատականների մեծ մասն այսօր էլ դիտական լուրջ արժեք ունի:
- 7) Չոպանյանի ուսումնասիրությունները գրված են անտիկ և եվրոպական գրականությունների իմացության պաշարի հիման վրա:
- 8) Հայ միջնադարյան տաղերի նրա ֆրանսերեն թարգմանությունները նպաստել են Վ. Բրյուսովի "Поэзия Армении" ժողովածուի կատարելագործմանը:
- 9) Հայ գրականությունը Եվրոպային ու աշխարհին ներկայացնելու համար Ա. Չոպանյանն իրեն գինակից է ընտրել ֆրանսիական գրականության, պատմագրության մեծագույն ուժերին՝ Անատոլ Ֆրանսին, Պոլ Ադամին, Գաբրիել Մուրերին, Ֆրեդերիկ Միստրալին, Ռենե Գրոսսեին և ուրիշներին:
- 10) Ա. Չոպանյանի բազմաթիվ ուսումնասիրությունների ամբողջությունը հայ միջնադարյան բանաստեղծության պատմությունն ստեղծելու կարևորագույն փորձ է:
- 11) Մեծ հայրենասերը կորցրած հայրենիքի փոխարեն ստեղծում էր մի հոգևոր Հայաստան, ուր Արեմտահայաստանը՝ վերածնված իր գաղթօջախներով, և փոքրացած Մայր Հայաստանը հանդես էին գալիս միասնական ու հզորացած՝ մշակութային հին տարածքները վերագտած:
- 12) Ա. Չոպանյանն ապացուցում է, որ իրենց մշակույթը, գրականութունը, պատմական անցյալը մոռացող ժողովուրդներն ապագա չունեն:

АРШАК ЧОПАНЯН И ДРЕВНЕАРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРА

*ԱՋԼԻՏԱ ԴՕԼՈՒԽԱՆՅԱՆ*

Р е з ю м е

Связь Аршака Чопаняна (1872–1954) с вопросами древнеармянской литературы приводит к следующим заключениям: А. Чопанян занимался древнеармянской литературой почти шесть десятков лет, т. е. в течение всей своей творческой жизни. Изучение древнеармянской литературы для него имело актуальное значение, так как возвышение культурных и литературных ценностей прошлого способствовало развитию литературной и культурной жизни. Чопанян преподнес международной общественности на французском языке в особенности древнюю лирику, что позволило зарубежным арменоведам и литературоведам получить новые научные заряды от этих книг. Переводы трудов древнеармянских авторов Чопанян снабжал бесценными в филологическом аспекте научными исследованиями. Большая часть оценок, данных Чопаняном Нахапету Кучаку, Нагашу Овнатану, Григору Нарекаци, Ованесу Тлкуранци, Фрику и другим средневековым поэтам, и в наши дни имеет большое научное значение. Исследования Чопаняна основаны на глубоких знаниях античной и европейской литератур. Его французские переводы средневековых армянских лириков способствовали усовершенствованию сборника В. Брюсова "Поэзия Армении". Для представления армянской литературы Европе и всему миру А. Чопанян избрал себе в соратники величайших французских литераторов и историографов, таких как Анатоль Франс, Поль Адам, Габриель Муре, Фредерик Мистрал, Рене Гресе и др. Великий патриот воссоздал духовную Армению, где Западная Армения – потерянная родина – со своими возрожденными колониями и маленькая Мать Армения выступают едиными и могучими, вновь обретшими прежние культурные ценности. Чопанян доказывал, что народы, забывающие свою культуру, литературу и историческое прошлое, не могут иметь будущего.

ARSHAK CHOPANYAN AND ANCIENT ARMENIAN LITERATURE

*AELITA DOLUKHANYAN*

S u m m a r y

Connection between Arshak Chopanian (1872-1954) and the problems of ancient Armenian literature leads us to the following conclusions: Arshak Chopanian devoted nearly sixty years, almost all his creative career, to ancient Armenian literature. Studying ancient Armenian literature was actually most important to Arshak Chopanian; praising literature and values of the medieval culture, he tried to stimulate the evolution of literary and cultural life of his own time. Especially, Chopanian presented international readers with the French translations of ancient Armenian lyrics and even if Armenian poetry was not read by all of them, it impressed many scientific circles of Armenian and foreign armenologists and literary critics. Translating works of Armenian medieval authors, Chopanian enriched them with his own scientific investigations, the philological value of

which is great. Chopanian drew his subjects from Armenian medieval manuscripts, but his approach was critical and he gave them his high appreciation. The appreciation given by Chopanian to Nahapet Kuchak, Naghash Hovnatan, Grigor Narekatsi, Hovhannes Tlkurantsi, Frik and other medieval talented poets is mainly valuable even today. Chopanian's investigations are based on his good knowledge of antique and European literature. His French translations of Armenian medieval taghs (poems) contributed to improve the collection of Armenian Poetry ("Поэзия Армении") by V. Bryusov. To present Armenian literature to Europe and the entire world A. Chopanian sought for the support of the greatest representatives of French literature and historiography, such as Anatole France, Paul Adam, Gabriel Mouret, Frederic Mistral, Rene Grousset and others. A. Chopanian's numerous investigations may be considered as the first and the most important attempt to create the history of Armenian medieval poetry. Instead of the Motherland lost, this great patriot created a spiritual Armenia in which Western Armenia, reborn in the Diaspora, and reduced Mother-Armenia were represented together and strengthened with their recovered cultural space. A. Chopanian proved that nations who forget their culture, their literature and their historical past couldn't have future.